




Ֆինանսավորվում է  
Եվրոպական միության կողմից



**Հայաստանում ռեսուրսների արդյունավետ ու ավելի մաքուր արտադրության զարգացում**

**-ՌԱՄԱ մեթոդաբանություն-**

Ռեսուրսների արդյունավետ ու մաքուր արտադրությունը (ՌԱՄԱ) կանխարգելիչ բնապահպանական ռազմավարությունների համապարփակ և շարունակական կիրառումն է գործընթացների, ապրանքների ու ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու և մարդկանց ու շրջակա միջավայրի համար ռիսկերը նվազեցնելու նպատակով: ՌԱՄԱ նպատակն է արտադրել ավելի քիչ ռեսուրսներով և միաժամանակ նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի վրա ազդեցությունները՝ բարձրացնելով ընդհանուր արտադրողականությունը: **Փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ներ)** համար ՌԱՄԱ մեթոդաբանությունն արդյունավետ գործիք է ծախսերը նվազեցնելու, ինչպես նաև ՓՄՁ-ների մրցակցային առավելությունները բարելավելու և էկոլոգիապես մաքուր գործելակերպ կիրառելու համար: Ինչպես նաև ՌԱՄԱ-ն համարվում է ՓՄՁ-ներում շրջանաձև տնտեսության սկզբունքների ներդրման և խթանման արդյունավետ գործիք:

**«ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ**

**- Ճանապարհաշինական ընկերություն -**

**Կազմակերպության մասին**

**Հասցե՝** 0605, Արարատի մարզ, Ավշար գյուղ  
**Հիմնական արտադրատեսակներ՝** ասֆալտ, կրաքարի փոշի, շինարարական ավազ և մանրախիճ  
**Աշխատակիցների քանակ՝** 57  
**Հիմնական շուկա՝** Հայաստան  
**Հիմնադրման տարեթիվ՝** 1999



«Արարատ-Ճանշինը» մեծ ճանաչում ունի շինարարության և շինանյութերի ոլորտներում: Ծառայություններ է մատուցում ճանապարհների շինարարության, տեղադրման և վերանորոգման աշխատանքների համար, ինչպես նաև արտադրում է տարբեր ապրանքներ՝ ասֆալտբետոն, շինարարական ավազ, մանրացված քար և հանքային փոշիներ: Ընկերությունն իր նյութերն արդյունահանում է սեփական քարհանքից և շինանյութերի արդյունաբերական արտադրության համար օգտագործում է առաջադեմ տեխնոլոգիական սարքավորումներ: Ավելի էներգաարդյունավետ արտադրական օբյեկտի հասնելու շարժառիթով (ինտեգրված իր աճի ծրագրերում) ընկերությունը մասնակցել է ՌԱՄԱ ցուցադրական նախագծին «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green)-ի շրջանակներում (2013-2017): Այս հրապարակումը ցույց է տալիս ընկերության փորձը, որը զեկուցվել է 2021 թվականին իրականացված մոնիթորինգից հետո՝ ծրագրի ավարտից չորս տարի անց:

**Առավելություններ**

- 7/8 ՌԱՄԱ տարբերակների իրականացում
- Ընդհանուր տնտեսական խնայողություն՝ 193,394 եվրո/տարի
- Ընդհանուր մարման ժամկետ՝ 4.3 տարի
- Ռեսուրսների սպառման կրճատում արտադրանքի միավորի համար (ասֆալտի արտադրություն). էլեկտրաէներգիա՝ 73% | բնական գազ՝ 42 % | ջուր՝ 16%
- Հումքի օգտագործման և աշխատանքային պայմանների բարելավում

Action implemented by:





# Նախագծի մոտեցումները

ՌԱՄԱ գնահատում. ուսումնասիրվել է արտադրական տարածքը, և բացահայտվել 8 տարբերակ, որոնցից 7-ը իրականացվել են:

1. Բիտում ընդունող համակարգում էլեկտրական ջեռուցման փոխարինում բնական գազով:
2. Մեքենաների սպասարկում և վերանորոգում:
3. Շենքի երեսպատման բարելավված ջերմամեկուսացում:
4. Դռների և պատուհանների փոխարինում:
5. Բարելավված լուսավորության համակարգ և LED-ի ներդրում:
6. Բնական գազի և տաք ջրի շրջանառության վրա հիմնված ավելի արդյունավետ ջեռուցման համակարգ:
7. Հին (մաշված) հիմնական արտադրական սարքավորումների վերանորոգում:

**Էլեկտրական ջեռուցման համակարգի փոխարինում բնական գազով:** 1-ին և 6-րդ տարբերակներն առաջարկել են բնական գազը՝ որպես ջեռուցման էներգիայի լավագույն աղբյուր: Ներդրվել են բնական գազի կաթսա, խողովակաշարեր, իսկ ջրամբարները պատշաճ մեկուսացվել են, ինչից ձեռք է բերվել տաք ջրի վերաշրջանառություն, արդյունքում նաև ավելի մեծ արդյունավետություն:

**Շենքերի մեկուսացման բարելավում:** 3-րդ և 4-րդ տարբերակները վերաբերում էին ջեռուցվող տարածքներից արտաքին միջավայր ջերմային կորուստների խնդրին, որի լուծումը նվազեցրեց էներգիայի սպառումը:

**Սարքավորումների և օբյեկտների վերանորոգում և արդիականացում:** 2-րդ, 5-րդ և 7-րդ տարբերակները կենտրոնացած էին արտադրական օբյեկտի արդիականացման վրա: Լուսավորման համակարգերում ներդրվեց LED տեխնոլոգիան: Գնահատվել է հին և մաշված տեխնիկան՝ վերջիններս վերանորոգելով կամ փոխարինելով նորով: Բացի այդ, ընկերությունը նաև նախընտրեց արդիականացնել իր արտադրամասը՝ տեղադրելով ասֆալտի արտադրության նոր հոսքագիծ, նաև նոր ավտոպարկ: Արդյունքում ասֆալտի արտադրությունն աճել է չորս անգամ՝ զգալիորեն ցածր պահելով էներգիայի և բնական գազի սպառման ցուցանիշները:

## Պահպանելով ձեռքբերումները

Վերապատրաստված տեխնիկական խորհրդատուների և անձնակազմի աջակցությամբ ընկերությունը ստացել է վերապատրաստում և անհատական աջակցություն՝ ընդունելու ՌԱՄԱ սկզբունքները: Դրանք հանգեցրին հետևյալ ձեռքբերումներին՝

### ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ներդրումներ (Եվրո)	Խնայողություն (Եվրո/տարի)
828,280	193,394



### ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Էլեկտրաէներգիա (կՎտժ/տարի)	Ջերմային էներգիա (կՎտժ/տարի)	Նյութեր (տ/տարի)	CO <sub>2</sub> (տ/տարի)
1,844,901	5,367,631	127	1,895



## Այլ հնարավորություններ

Մոնիթորինգի ընթացքում բացահայտվել է ներցանցային ՖՎ արևային համակարգի հնարավորությունը: Գտնված գործառնական պայմաններում թիմը եզրակացրեց, որ 460 կՎտ անվանական հզորությամբ համակարգը կարող է ապահովել տարեկան 35,411 Եվրո ծախսերի խնայողություն: Այս տեխնոլոգիայի մեջ ներդրումները Հայաստանում չունեն արագ վերադարձ՝ մոտավորապես յոթ տարի մարման ժամկետով: Այնուամենայնիվ, այն առնվազն 20 տարով ապահովում է վերականգնվող էներգիայի աղբյուրի հասանելիությունը:

ՌԱՄԱ-ի ներդրումը եղել է ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի մաս՝ «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green) (2013-2017) և «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» (2019-2022), որոնք իրականացվել են ՄԱԿԱԶԿ կողմից: Այս համատեքստում «ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ-ն միացել է ՌԱՄԱ ուսուցման ու աջակցության ծրագրին «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green)-ի և մշտադիտարկվել է «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագրի շրջանակներում: Հետագա այցելություններ են իրականացվել նաև «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագրի շրջանակներում ՌԱՄԱ տարբերակները «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green) ծրագրի ավարտից հետո: «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագիրն օգնում է Արևելյան գործընկերության գործընկեր վեց երկրներին պահպանելու իրենց բնական կապիտալն ու բարձրացնելու մարդկանց բնապահպանական բարեկեցությունը՝ աջակցելով շրջակա միջավայրի առնչվող գործողություններին, ցուցադրելով և բացելով ավելի կանաչ աճի հնարավորությունները և ստեղծելով շրջակա միջավայրի ռիսկերն ու ազդեցություններն ավելի լավ կառավարելու մեխանիզմներ: Ավելի իմանալու համար այցելե՛ք [www.eu4environment.org](http://www.eu4environment.org):

Այս հրապարակումը լույս է տեսել Եվրոպական միության աջակցությամբ: Հրապարակման բովանդակությունը բացառապես ՄԱԿ ԱԶԿ-ի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները: